ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան փ., շ. 55, Հեռ. (060)700131

N 207-25
27 հունվար 2025 թ.

«ԱՐՏԴԻԱՆՇԻՆ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ գործընկեր

Դիլիջանի համայնքապետարանի, ի դեմս համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի, (այսուհետ՝ Պատվիրատու) և «Արտդիանշին» ՍՊԸ-ի, ի դեմս տնօրեն Մ. Խաչատրյանի, (այսուհետ՝Կապալառու), միջև 27.09.2022 թվականին կնքվել է ՀՀ-ՏՄԴՀ-ԲՄԱՇՁԲ-22/03 ծածկագրով «Դիլիջան համայնքի Մշակույթի պալատի շենքի հիմնանորոգում» աշխատանքների կատարման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի 1.1 կետի համաձայն Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «Դիլիջան համայնքի Մշակույթի պալատի շենքի հիմնանորոգում» աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Վերոնշյալ պայմանագրի հավելվածով, պայմանագրի կատարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 01.12.2024 թվականը:

Հաշվի առնելով այն փաստը, որ սահմանված ժամկետում «Արտդիանշին» ՍՊԸ-ի կողմից չեն կատարվել պայմանագրային պարտավորությունները, Պատվիրատուն օգտվելով Պայմանագրի 6-րդ կետով և Պայմանագրի 3.1.4. կետով սահմանված, իր կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու և իրեն պատճառված վնասների հատուցում պահանջելու իրավունքից, Դիլիջանի համայնքապետարանի և «Արտդիանշին» ՍՊԸ–ի միջև 27.09.2022 թվականին կնքված ՀՀ-ՏՄԴՀ-ԲՄԱՇՁԲ-22/03 ծածկագրով «Դիլիջան համայնքի Մշակույթի պալատի շենքի հիմնանորոգում» աշխատանքների կատարման պայմանագիրըհամարվումէմիակողմանիլուծված:

Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում ենթակա է գանձման ինչպես Պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը, այնպես էլ պայմանագրի ապահովման 27 016 530 (քսանյոթ միլիոն տասնվեց հազար հինգ հարյուր երեսուն) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել Դիլիջանի համայնքապետարանի 900405051716 հաշվեհամարին, և որակավորման ապահովման 81 049 589 (ութսունմեկ միլիոն քառասունինը հազար հինգ հարյուր ութսունինը) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել Դիլիջանի համայնքապետարանի 900405051716 հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն, Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանիլուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ եթե սույն ծանուցումը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում վճարվի պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ապա «Արտդիանշին» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ